## ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

# ՄԱՅՐ ԱԹՈՌ

*Մարտի 30-ին, Ծաղկազարդի տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց։*

*Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

*Պատարագիչն էր Գեր. Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը, որը և քարոզեց հավուր պատշաճի։*

❋❋❋

*Ապրիլի 3-ին, Ավագ հինգշաբթի օրը, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց։*

*Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

*Պատարագում էր Գեր. Տ. Ներսես եպիսկոպոս Աբրահամյանը, որը և հավուր պատշաճի քարոզեց։*

❋❋❋

*Ապրիլի 6-ին, Զատկական տոնի օրը, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց։*

*Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

*Օրվա պատարագիչն էր Գեր. Տ. Ներսես եպիսկոպոս Աբրահամյանը, որը և հավուր պատշաճի քարոզեց։*

❋❋❋

*Զատկական տոնի առթիվ Վեհափառ Հայրապետը բազմաթիվ շնորհավորական հեռագրեր ու նամակներ է ստացել, որոնց թվում Համայն Ռուսիո Պատրիարքից, Վրաց Կաթողիկոսից, Տանն Կիլիկիո Կաթողիկոսից, Երուսաղեմի Պատրիարքից, Պոլսի պատրիարքական Տեղապահից, ՍՍՌՄ և արտասահմանյան թեմերի առաջնորդներից, թեմական խորհրդներից։*

*Վեհափառ Հայրապետը հաճեց պատասխանել փոխադարձ շնորհավորական հեռագրերով։*

❋❋❋

*Մարտի 22-ին Մայր Աթոռ ժամանեց Ռումանիո Հայոց թեմի ժամանակավոր Առաջնորդ Գեր. Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը՝ թեմի գործերի մասին Վեհափառին զեկուցելու համար։*

❋❋❋

*Ապրիլի 1-ին բարեպաշտ Տ. Գարեգին քահանա Տեր-Հակոբյանին արեղայի կոչում շնորհվեց։*

*Կոչման շնորհման արարողությունը կատարեց պատարագիչ Գեր. Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը։*